

ծառայութեան մի որ ըրած ըլլայ Սպանիական տէրութեան կամ Միլան քաղաքի. մեր Գէորգայ այլ եւ այլ վկայեալ ճարտարութիւնքն հաւանութիւն կ'ընծայեն՝ որ ինքն ըլլայ այս արդիւնաւորն, որդին Յովհաննու: — Թէ իր աղերսից մէջ ըսածէն և թէ պաշտօնէից վկայութեանն իմացուեցաւ իրեն ընտանեաց տէր ըլլալն, սակայն մեզ անծանօթ մնան թէ կինն և թէ զաւակքն, և թէ իր մահուան ժամանակն և տեղին: Բայց մեր գտած այսչափ յիշատակներն ալ բաւական և շատ են զինքը թէ ճարտար, սրտոտ, կարող մարդ մի ճանչցընելու, և թէ Վիենետոյ չասարակապետութեան երախտաւոր անձ մի այնպիսի վտանգաւոր ժամանակ և տեղ՝ ըրած հաւատարիմ և զօրաբին ծառայութեանց համար, որով միանգամայն և պարծելի:

Համանուն Գեորգ ո. Յովհաննու՝ մեր ծանօթ Գէորգայ մահուան հաւանական թուականէն (1594) 20 տարի վերջ ալ յիշուի, և շատ հեղ վաճառակաս կ'անուանի, բնակութեամբ ի Ս: Մարիամ Խորոտիկ թաղի. այլ եւ այլ անգամ Նօտարաց անջեւ վկայ եղած է իր ազգայնոց զաշնադրութեանց. անգամ մ'ալ (1614, մայ. 12) վկայէ Նախիջեւանցի Պետրոսի ո. Յովհաննու համար, թէ ինչուան այն ատեն ամուրի էր:

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՅԵՐԲՈՊԱ

(Տես յ'էջ 236)

Փ. Մ. ՊՐՈՍԷ

ՅեսՍէն—Մարդէնի՝ հայկական լեզուի ուսմամբ պարապող և շարունակ կողն եղաւ Պրոսէ, որոյ պիտաւոր մէկ արդիւնքն ալ է Վրաց լեզուի ուսումը մտցընելն ու բարգաւաճեցընել յԵւրոպա: Իր կենսագրութիւնը՝ գիտութեան յարատեակ անձնանուիրութիւն մը կրնայ համարուիլ: — Յրնաւ Պրոսէ յամի 1802 ի Փարիզ ի 5 փետր. ուր հայրը վաճառականութեամբ կը զբաղէր: Ուսմանց նախնական ընթացքն կատարեց Օւլէանի փոքր կղեր

րանոցին մէջ, իսկ ճարտասանականն ի Փարիզ, 1818ին մտաւ ի զպրոցն Յիսուսեանց ի Մոնրուս մերձ ի Սոյ: Երկու տարիէն Փարիզ դառնալով կ'ապրէր մասնաւոր առններ դասախօսութիւն ընելով. 1821ին ստացաւ զնախաժողովն (bachelier) ուսուցչի: Արդէն այն աստիճանն քաղ հմտացած էր յոյն լեզուի. սորվեր էր նաև զհերբրայականն, մասամբ նաև զարաբ, զսինէական, մանչու և թիպէզ լեզուս: 1822ին Ասիական ընկերութեան հաստատութեամբ՝ հրաժարելով եկեղեցական վիճակի ուսմունքէ, առաւ ինքզինքը բուլղոլիին սինէացի լեզուին: Բայց իրեք տարի վրան անցնելէն ետքը՝ անկէ ալ ետ կեցաւ, փափաքելով միայն հայ և վրացի լեզուաց ուսմամբ պարսպի: Այս լեզուաց ակործը ազգեր էր իրեն Սէն-Մարգէն, և Եւզինէոս արքիմանարիզին առաւ լեզուով շարադրած երկափորութիւն մը. « Նկարագիր Վրաստանի », թարգմանեալ ի զերման ի Փրետ. Շմիթէ, Ռիկա 1814: 1826ին ամուսնացաւ, բայց պաշտօն կամ զբաղմունք մը չկարենալով հայթհայթել, քիչ առնէն ազբատութեան մէջ ինկաւ: — 1830ին Գաղղիոյ կարողոս ժ թագաւորին փէյրօնէ նախարարի յիշատակագիր մը ներկայացոյց ցոցընելով թէ քանի՞ օգտակար կրնար ըլլալ ուսումնական քննադատական ուղեւորութիւն մը ի Վրաստան, և քիչ մը ատեն կենալը նոյն վախճանաւ ի վանս Հայոց որ յԷջմիածին: Յուլիսի յեղափոխութիւնը իր այս ամէն ակնկալութիւններն ի զերև հանեց. և Վրաց լեզուի ուսուցչի պաշտօնն ալ որուն հետամուտ էր, զլացուեցաւ իրեն: 1834ին նորէն դառնալով ի պաշտօնն, իր մտածութիւնն միւսանգամ ներկայացոյց կիկոյի, թէպէտ առաջնոյն հաւասար անյաջողութեամբ: Կինը մեռնելով՝ կրկին ամուսնացաւ 1836ին, և այն աստիճանի յետին կարօտութեան մէջ ինկաւ, որ ինչուան ստիպուեցաւ թագաւորական տպարանին մէջ զրաշարութիւն ընել: Մական իր անխոնջ աշխատանք և յարատե եռանգը՝ հրակիրեր էին իր վրայ փեթրպուրկի Գիտութեանց Ակադեմիային մտադրութիւնն, որ 1836ին զինքն անդամակից ընտրելով՝ հրակիրեց որ այնուհետև բնակութիւնն հաստատէ Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ: Պրոսէ ընդունեցաւ այս հրաւերը, և յայնմհետէ իր գործունեայ կենաց արգասիք կը պատկանին այս նոր հայրենեաց: 1838ին ուղեւորութիւն մը ըրաւ ի Մոսկուս, ուր Լազարեանց ուսումնարանին այցելութիւն մը ընելով, հինգ տարիէն անոր կանառակից եղաւ:

1845 հարաւային Եւրոպայ ճամբորդութիւն մը ընելով՝ քանի մը օր կեցաւ Վենետիկոյ Միխիթարեանց վանքն ի Ս. Ղազար, ուր ծանօթացաւ Ալվազովըքի և Ալիշան վարդապետաց հետ: Իսկ ի 1847—8 յաջողեցաւ վերջապէս գործադրել իր փափաքը՝ ճանապարհորդելու ի Վիեր և ի Հայաստան. ուստի դառնալով ի փեթրպուրկ, բուլղոլիին զբաղեցաւ իր սիրելի ուսմամբք: 1863ին դարձաւ ի Գաղղիա, և ի դարձին ի 1867 փափաքեցաւ կրկին յայց ելլել սրբոյն Ղազարու մենաստանին, բայց արգիլուեցաւ մաղձախտին պատճառաւ. 1869ին եկաւ ի Գաղղիա, ինչպէս նաև ի 1880, որ կենացը վերջին տարին եղաւ. վանս զի յ' 3 սեպտեմբերի կնքեց իր կենանքը փռութիւն մօտ ի Շաթրլոյ:

Լորան Պրոսէ՝ իր որդին, 1887ին կարգաւորեալ մատենագիտական ցուցակ մը հրատարակեց հօրը բազմաթիւ գրաւոր երկասիրութեանց, որոց թիւը գրեթէ երեքհարիւր կ'անցնի, և ընդհանրապէս կը վերաբերին վրաստանի և Հայաստանի: Ասոնց մէջ նախամեծար կրնան սեպուղի իր Հնախօսական մանագարնորոշութեան մը տեղեկագիրքը (Rapports sur un voyage archéologique) զոր կոչկատեան գաւառաց ետեղակալ կոմս վորոնցոյի հովանաւորութեամբ բրած է յամս 1847-8, աշխարհացոյց տախտակաւ մը և քառասուն և հինգ պատկերներով. և հրատարակուած է ի փեթրպուրկ յամի 1851: Ասկէ զատ մեծապէս հետաքննական է իր Աներակը Անայ կոչուած գրուածը (Ruines d'Ani), որ ինչպէս յայտնի է Ժ և ԺԱ դարուց Բագրատունի թագաւորաց ժամանակ Հայոց թագաւորակաց քաղաք էր: Այս երկասիրութիւնն ալ հրատարակուած է ի փեթրպուրկ յամս 1858-1861, աշխարհացոյց քարտիսի: Առաջին տետրին մէջ կայ նաև տեղեկագիր մը Էջմիածնի մատենադարանին ու հայկական հնութեանց վրայ (էջ 1-130):

Ինչպէս Տիւրքիէ և Լանկլուա, Պրոսէ ալ ունեցաւ մտածութիւն Հաաքման մը հայկական պատմիչաց, որոյ առաջին հատորը հրատարակեց ի 1874, և կ'ամփոփէր զթարգմանութիւն թովմայի արծրունայ (Ժ դար) Պատմութեան Արծրունի իշխանաց վասպուրականի. — Առաքելի Դարիթեցոյ (ԺԷ դար) պատմական երկասիրութեան ի 1602-1664. — Յովհաննու Երարեցոյ Պատմութեան Աղուանից: Երկրորդ հատորն հրատարակուեցաւ ի 1876, յորում կան պատմական գրուածք Չաքարիայ Սարկաւազի (ԺԷ դար), և կոնդակ Յովհաննաւանաց. Դաւիթ Բէկի պատմութիւն (ԺԷ դար), Արբա-համու կրետացոյ (ԺԷ դար) Պատմութիւն Նատիր Շահի. Սամուէլի Անեցոյ (ԺԲ դար) Տախտակը ժամանակագրականք: Չաքարիայի, Առաքելի և մանաւանդ Արբահամու կրետացոյ թարգմանութիւնք դժուարին էին յոյժ ի պատճառս բազմաթիւ տանիկ և արաբ խօսից զորս նոյն պատմագիրք կը գործածեն:

1870ին հրատարակեց Պրոսէ ուրիշ երկասիրութիւն մ'ալ հետեւեալ խորագրով. « Երկու հայ պատմիչք. Կիրակոսի Գանձակեցոյ (ԺԳ դար) Պատմութիւն սրբոյն Գրիգորի և յաջորդաց նորա, և Ուխտանեսի Եղեռացոյ (Ժ դար) պատմութիւն եռամասնեայ ». 1864ին ալ զպատմութիւն Սիւնեաց Ստեփանոսի Ուսպելեան, Սէն-Մարգէնի ձեռքով սկտաւած Լրպոյի արևելեան կայսերաց պատմութեան նոր տպագրութեան շարունակութեանը մէջ զետեղեց (հատոր ԺԲ 449-481) քաղուած մը ի պատմութեանէ արշաւանաց Մոզուլաց ի հիւսիսային Ասիա յ'ԺԳ դարու: փեթրպուրկի Գիտութեանց Ակադի-միոյ յիշատակարանաց մէջ այլևայլ հատուածք կան իրեն գիտութեանց, ուսմանց և գրչին արդիւնք, նկատմամբ մեր ազգային պատմութեան և մատենագրութեան, և զորս մէջ պիտի բերենք: Հետաքննական են իր հետազօտութիւնք Երկաթէ դիմակին վրայ, զոր ոմանք կարծեցին թէ ըլլայ Աւստիք պատրիարք Կոստանդնուպոլսի, որ ինչպէս յայտնի է ի պատմութեանց

թէ՛ նոյն քաղքին և թէ Երուսաղեմի պատրիարքական պաշտամանէն ինկաւ, ու մեռաւ ի Գաղղիա :

Հօրը գրուածոց մատենագիտական ցուցակն յօրինող որդին՝ հետեւեալ խօսքերով կ'աւարտէ զայն, զոր և մեք աւելորդ չենք համարիր մէջ բերել . « Հարկ սեպուեցաւ յիշեցընել թէ Պրոսէ ոչ պատմիչ մ'էր և ոչ լեզուագէտ : Բոլորովին հեռի ի տկարութենէ՛ ընծայելոյ իրեն ինչ որ չունէր, Պրոսէ ոչ երբեք պահանջած է ըլլալ՝ ոչ մին և ոչ միւրը, բառին բուն նշանակութեամբ : Խորթին ու վերացեալ ուսմանց եռանդուն սիրող, անխոնջ ու համբերող հետամուտ, բաւական սեպեց նուիրել իր կեանքը պատմութեան նիւթեր հաւաքելու, ու այդ ուսմանց երկիրը մաքրել պատմական հետախուզութեամբք, անոնց օգտին ու պիտոյից ծառայեցընելով նաև զբանասիրութիւն : Եւրոպայի հայագէտք գիտեն թէ ո՛րչափ օգտակար եղած է իրենց ուսմանց իր ջանքովը պատրաստած այսպիսի ճոխ ժառանգութիւն մը » :

** Այսչափ 'Շոուսֆ : Իսկ մենք աւելցընենք Պրոսէի որդւոյն հրատարակած մատենացուցակէն՝ ինչ որ ուղղակի մեր ազգային ու մատենագրական պատմութեան կը վերաբերի, երախտապարտ մեծարանօք իր բազմաբղիւն և վատակասէր յիշատակին :

1. Տեղեկոթիւն հայ գրչագրաց որ կը պատկանին Արտաքին Գործոց Պաշտօնարանին քով եղած Աւիական կանառի մատենադարանին . Notice des manuscrits arméniens appartenants à la Bibliothèque de l'Institut Asiatique établie près le Ministère des Affaires Etrangères. Ընթերցեալ է 29 սեպտ . 1840 .

2. Տեղեկոթիւնք ի վերայ վանաց Էջմիածնի . Notice sur Edchmiadzin, ընթերցեալ է 14 փետր . 1846 . Թարգմ . ի ռուս և տպագրեալ :

3. Թուղթ կորգանովի՝ գործակատարի Գրիգորեան Հայոց սինոդոսին, առ կայսերական Ալիաղիմիայն Գիտութեանց . յ'7 մարտի 1862 ամին, ծանօթութեամբք Պրոսէի . Lettre de M. Korganoff, procureur de Synode arménien grégorien à l'Académie Impériale des Sciences, du 7 mars 1842 ; annotée par M. Brosset. Ընթերցեալ է 16 սեպտեմբերի 1842 :

4. Ի վերայ հայկական մատենագրութեան , ի ռուս լեզու . Sur la littérature arménienne, en russe .

5. Տեղեկութիւն հայ գրչագրի մը վրայ, թղթոց սրբոյն Պաղտի . Notice sur un manuscrit arménien des Epîtres de S. Paul. Ընթերցեալ յ'3 յունիսի 1859 :

6. Գրականական զորժուէութիւն Հայոց և վրաց ի Ռուսաստան, յայնկէր կովկասու և ի Ղրիմ . Մասն Ա . Ընթերցեալ է 5 սեպտեմբերի 1862 : — Մասն Բ . ի 6 նոյեմբերի, 1863 : — Մասն Գ . յ'8 յունիսի 1865 : — Մասն Գ . ի 28 յունիսի 1866 :

7. Ի վերայ կրկին հայկական խմբագրութեանց, յոսանաւոր և յարձակ,

վարուց սրբոյն Բարալամն և Յովսափատայ . Sur deux rédactions arméniennes, en vers et en prose, de la légende des saints Baralam = Varlaam et Ioasaph = Iosaphat. Ընթերցեալ է 21 փետր . 1878 .

8 . Կայսերական հասարակաց մատենադարանին համար նոր ստացուած հայ գրչագրի մը վրայ , յորում կան աստեղագիտական և աստեղագրաշխական գրութիւնք . Notice sur un manuscrit arménien, nouvellement acquis pour la Bibliothèque Imperiale publique (de contenu astrologique et astronomique). Ընթերցեալ է 28 նոյեմբ . 1878 .

9 . Տեղեկագիր 1847 և 1848 թուականներուն Պրոսէի ըրած հնագիտական ուղեւորութեան մը վրայ է Հայս , աշխարհացոյց քարտիսով մը ու 45 վիմագրեալ պատկերներով . Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847-1848 par M. Brosset. Avec un atlas de 45 pl. lithographiés. S. P^b. 1851 .

10 . Ուսումնասիրութիւն Էջմիածնի մատենադարանին և ուրիշ հայկական հնութեանց վրայ : Ուղեւորութիւն Խանիքոֆի յԱնի . Etudes sur la Bibliothèque d'Edchmiadzine et sur les antiquités arméniennes ; — Excursion à Ani, en 1848, par M. N. Khanykof .

11 . Տեղեկագիր Ջալալեան Սարգիս վարդապետի է Մեծն Հայաստան ըրած ուղեւորութեան գրոց երկրորդ մասին վրայ . Rapport sur la 2^{me} partie du voyage du P. Sargis Dechalalians dans la grande Arménie .

12 . Երանոթութիւն Ակորի հայ գիւղին ու Սրբոյն Յակովբայ վանից վրայ . Note sur le village arménien d'Akorhi et sur le couvent de S^t. Jacques .

13 . Պատմական ծանօթութիւն Հաղբատայ ու Սանահնի հայ վանորէից վրայ . Notice historique sur les couvents arméniens de Haghbat et de Sanahin .

14 . Տեղեկութիւն Աբիխի՝ զուերակաց Անուց գրած թղթոյն վերայ . Rapport sur la lettre de M. Abich sur les ruines d'Ani . Ընթերցեալ է 28 մարտի 1845 տարւոյն .

15 . Երանոթութիւն Կեչարուաց հայ վանքին վրայ է Դարաչիչակ . — Notice sur le couvent arménien de Ketcharhous à Daratchitchag : Ընթերցեալ է 22 նոյեմբ . 1852 .

16 . Աւերակք Անուց , որ Ժ և ԺԱ դարուց մէջ թագաւորական ոստանն էր Բագրատունեաց . Պատմութիւն և նկարագիր . — Մասն Ա . Նկարագրութիւն՝ աշխարհացոյց քարտիսի և քանեւչորս պատկերօք . — Մասն Բ . Պատմութիւն աշխարհացոյց քարտիսի՝ և վիմագիր նկարներով . — Les Ruines d'Ani, capitale de l'Arménie, sous les rois Bagratides, aux X et XI S. Histoire et descriptions, par M. Brosset. I partie; de-

scription, avec un atlas de 24 pl. lith. S. Pb. 1860, 4°. V + 1 — 92 pages. — II p. Histoire, avec un atlas de 21 pl. lith. S. Pb. 1861. 4 XVI + 93—176 p.

**Ծանօթութիւն զոր կը հազարդէ Պ. Գիւնիք՝ հանելով յիշլով սպա-
զրուած զրբէ մը Wiadomosc o Ormianach w Polszeze, հեղինակու-
թեամբ Զաքարիէ վիչի :** Note communiqué par M. Kunik. et tiré de
l'ouvrage Wiadomosc ó Ormianach w Polszeze. Lwow. 1842, par
Zachariasiewicz.

Յուելուած Ա. Տեղեկութիւնը հազարդեալք է Հ. Բառնարայ Էսայեան . —
Communications du P. Barnaba d'Isaja, pages 144—148.

» **Բ. Արձանագիր Մարմաշինոյ . —** Inscription de Marmachen ;
p. 148—151 .

» **Գ. Կարապիբ Աւրի վանաց, և տեղեկութիւն է վերայ Մխիթա-
րայ Աւրիվանեցոյ, հայ մատենագրի յերեքտասաներորդ դարու . —** De-
scription du couvent d'Aïrivank et notice sur Mekhitar Aïri-
vantsi, auteur arménien de XIII S. p. 152—174 .

**Ընդհանուր ցուցակ պատկերաց, հանդերձ տեղեկութեամբ է վերայ
երկզկիսեան արժուոյն փորագրելոյ է ստորոտ խաչի միոյ, յԱնի գտնուած
յիշատակարանի կամ շէնքի մը վրայ . —** Index général des planches
(avec une notice sur l'aigle à deux têtes tracé au bas d'une
croix, sur un des monuments de la ville d'Ani). p. 175—176.

**17. Քննադատութիւն քանի մի տեղեաց՝ Աւիշան Հ. Ղ. երկասիրած
Հայոց մեծաց Տեղագրին՝ նկատմամբ Անոյ . —** Examen critique de
quelque passages de la Description de la grande Arménie, du P.
L. Alichan, relatif à la topographie d'Ani. Ընթերցեալ է 14 յու-
նիսի 1861 :

**18. Հաղբատ ու Սանահին հայ վանորէից վերայ, (որիչ է նախընթա-
ցէն զոր յիշեցինք) .** Sur les couvents arméniens de Haghpat et de
Sanahin. Ընթերցեալ է 25 ապրիլի 1862 :

**19. Յովհաննու վարդապետի Ղրիմեցոյ՝ Ստորագրութիւն հայ վանորէիցն
Հաղբատայ և Սանահինի, ծանօթութեամբք և յաւելուածովք է Պրոսէէ .**
Description des monastères arméniens d'Haghpat et de Sanahin,
par l'archimandrite Jean de Crimée, avec notes et appendice
par M. Brosset. — S. Pb. 1863 p. 94 .

**20. Բացատրութիւն պլեւայլ վրացի, հայ և յունական արձանագրու-
թեանց, մեռասան վիմազրեալ տախտակօք .** Explication de divers in-
scriptions géorgiennes, et arméniennes et grecques ; avec 11 pl.
lithograph. Ընթերցեալ է 11 օգոստ. 1867 :

**21. Տեղեկութիւնք Սարգիսեան Հ. Կերպիսի ձեռքով հաւաքուած վրացի
արձանագրութեանց վրայ .** Notices concernant les inscriptions géor-

giennes recueillies par le P. Nerses Sargissian. *Ընթերցեալ է 25 սեպտ. 1863 :*

22. *Իրանօթուփիւնք հայ արձանագրութեանց ի Պոլիարի, վիմագիր տախտակաւ մը. Notes sur les inscriptions arméniennes de Bolghari, avec 1 pl. lith. Ընթերցեալ յ'13 հոկտ. 1867 :*

23. *Տեղեկութիւնք մեզի ծանօթ ամենահին արձանագրին վրայ ի Ս. Յովհաննէս որ առ Մուրատ—չայի. Notice sur la plus ancienne inscription arménienne connue, (à Sourb Ohannès, sur le Murad-thaï). Ընթերցեալ է 1 օգոստ. 1856 :*

24. *Ժամանակագրական տեսակիտով նշանաւոր քանի մի հայկական արձանագրութեանց վրայ. De quelques inscriptions arméniennes, remarquables au point de vue chronologique. Ընթերցեալ յ' 2 դեկտ. 1859 :*

Շարայարեղի

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՑ

(Տես յ' էջ 151)

Ը

Կապերտի վաձառական մը և իր գործակատարը. — Բժիշկ Արապէկով. — Կարաւաւնի կարգադրութիւն. — Շոշիի պարտեզները. — Այցեդրութիւն մի առ իշխանն Բիզա Ղոշի Միրզաւ.

Հազիւ թէ ոտուրնիս պանդոկէն դուրս դրեր էինք, Թաթարի մը հանդիպեցանք, որ մեզ կ'ընկերակցէր, քայլիւ չափ չգատուելով: Ամուսնոյս հասկըցուց թէ յանձնարարութիւն ունէր սենեկի մանր գեղեցիկ զարդեր և ի Շուշի գտնուած հին կապերտներ ցուցընել, դիւրագին վաճառելու խոստմունքով: Նեղուած ու անհանգիստ այսպիսի նեղիչ գործակատարէ մը, վերջապէս տեղի կու տանք: Անվերջանելի ու իրարմէ անհարթ անձուկ ճամբաներէ առաջնորդելով, կանկ կ'առնու պարսկական ոճով շինուած վայելուչ տան մը առջև, որ գորգի վաճառականի